

ՍՏԱՆՈՒՄԻ ԳՐՈՒԹԻՒՆ

Պոչխորի	համար
արհեստ	12 փ.
վեցումս	7 "
Արտասահմանի	
համար ստեղծ	15 փ.
վեցումս	8 "
Ա. Արհեստի	համար
ստեղծ	3 սլ.
վեցումս	1.50 "

Ծանուցում ենք որ սուսին երեսին համար 40 սանթիվ իսկ վերջին երեսին համար 20 սանթիվ է, երեսին առջին սանթիվներու համար 20 0/0 զեղչ կրլայ:

Վառնայի համար ձեռք 40 սանթիվ է

ՁԱՐԹՈՒՄ

ԼՐԱԹԻՐ ԱԶԳՅՈՒՆ. ԲԱՂՍԻՍԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ՎԸ ՀՐԱՏ ԲԱԿՈՒԻ ԶՈՐԵԿՇԱՐԹԻ ԵՒ ԵԱՐԿԹ ՕՐԵՐԸ

ОТГОВОРНЫЕ: СТЕПАНЪ ВАНАРЯНЪ

Վառնայի և գրականության ինստիտուտի

Редакция на вѣстникъ "Шаржумъ" Варна

Redaction du journal "Charjoun" Varna (Bulgarie)

Պոչխորի համար ձեռք

15 ԱՍՆԹԻՄ

Արտասահմանի համար ձեռք

20 ԱՍՆԹԻՄ

Գրքերի և չեքրոնի

ՁԱՐԹՈՒՄԻ ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԷՏԻ Է ԿԱՆԽԻՆՎ ՎՃԱՐԷ

ՏՕՔ Ն. ՍՕԹԻՐՕՅ

Վերաբայում — Դանկարարձ

Վառնա Մարիա-Լուիզա, փողոց թիվ 8 (Զինուորական քիլոպի մաս) Հիւանդ կրնուի ժամը 2-4 կէս օրէ վերջ:

5-5

«ՏԱՌ ՏԱՐԻ Հ. Յ.

ԴԱՆՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԷՁ»

Արդէն այս անունով բերողները յանձնված է ապագայում:

Բրոշուրի նպատակն է, առանց խճճանքի Դանկարարութիւնը մէջ տեղ գնել իր իսկութեամբը և միեւնոյն ժամանակ փաստել թէ՛ իմ պայքարը սկսված է շատ հին ժամանակից և վերջերս միայն սուր կերպարանք ընդունեց: Բնական է որ բրոշուրի մէջ փաստող զօկիւմանները մեծ տեղ պիտի գրաւեն:

Բրոշուրի գինը ապագայում թիւնից վերջ 3 ֆրանկ է լինելու, իսկ բաժանորդ գրվողի համար 2.50 ֆր:

Դիմել «Շարժում»-ի Խմբագրութեան

ՀՍԹ ԴԵՂԱՎԱՃԱՍԻՏՈՒՆ

Ս. Դանարեան և Ընկ.

Սուսնոց փողոց (Պալլոք բազար) թիւ 524 Ա. ու չափքին ճիշտ տակը

Նոր բացուած սոյն գեղավաճառատանս մէջ կը գտնուին մաքուր և առաջնակարգ զեղերու մեծաքանակ մթերքէ զատ թարմ հաւքային ջուրեր, երոպական ամէն տեսակ էսքէսիալիսթէներ, բժշկական աճառներ, քառչուքի ապրանք վերաբերելու բոլոր առարկաներ, իրիկաթէօրներ, սիպիօրներ, ջերմաչափներ ևն ևն:

Աստուծոյ զատ կը գտնուի նաեւ սուսնկարգութեան, սկիւրջութեան և առհասարակ արհեստի վերաբերեալ քիմիական մաքուր բազաղրութիւններ:

Թարմ և անարտա

Նոր վէկիայի ձկան իւղ

Ցարդ զեղերու սղութեանը գծող

Հուրիւն յայտնողները կը բաւէ որ ուրիշ տեղէ մը գնում ընելէ առաջ անգամ մը դիմեն նոր գեղավաճառատանս, ուր ապահովարար պիտի գտնեն զեղերու աճառութեան հետ զեղերու ընտրելագոյնը:

Շրջակայ քաղաքներու և գիւղերու մէջ զեղերու կրկնավաճառումով զբաղող խանութպաններու համար մաքուր գեղ:

Յանձնարարութիւնք փութով և ճշգրութեամբ կը գործադրուին:

ԿՍՐԵԻՈՐ

Ռուստուկի, Պուրկազի, Շոմալուի և Սիլիվէնի բաժանորդներուն — Բարեհաճեցէք ձեր «Շարժում»-ին ունեցած պարտքերն/գրկել և թէ չէք ուզէր որ անունիգ հրատարակուի իրրեւ կազանդէք:

Պետոյի գրքի հրատարակութեան ն ու ի ռ ա տ ու ն ե Ր ի ն

Զանազան նորատեղծ պայմաններին պատճառով չը գրտեմ թէ որչափ կը մնամ վարնայում և հնարաւորութիւն չունեմ հրակելու այդ հրատարակութեան վրա: Իմ կարծիքով այդ խնդրը կայելի է կարգադրել այս ձեւով: Առաջինը՝ գրաքննորդ յանձնել պ. Օննիկ Բարսեղանին որ նա իր պատասխանատւութեամբ հրատարակէ գիրքը, ի հարկէ լաւ և վատ լինելու պատասխանատւութիւնից ես ազատ կը լինեմ ներատուների առջև: Երկրորդ՝ որ ներատուները զը բաժնեբեր ետ պահանջեն անմիջապէս և իրենց ուզած ձեւով վերջացնեն այդ գործը, երրորդ՝ որ սպասեն մինչեւ ես հնարաւորութիւն ունենամ գրքի հրատարակութեան հետեւելու:

Խնդրում եմ ներատուներից անմիջապէս իրենց կարծիքները յայտնել իմ այս առաջարկների մասին: Հակառակ պարագային ես կը վարվեմ այնպէս, ինչպէս յարմար եմ գտնում հրատարակութիւնը փայլուն և իր նպատակին իրօք ծառայած լինելու համար:

ՎԱՐՂՕ

Վանի Թշուառութիւն և Սով Առաջնորդարան հայոց համար 878

Վան 11 դեկտ. 1906

Մեծապատիւ Անդամք կարգադիր յանձնախմբի վասպուրականի կարօտելոց

Ի Վառնա

Յայ գոյ հայրենակիցք

Գոհութեամբ ստացանք ձեր նոյ. 20 թուակիր գումարները և չէք մը համաձայն, զոր ներփակ զրկած էիք 34, 13 օսմ. սկիւրջումարը ի նպատակ վանտ հայ կարօտելոց, զոր պովիլի կանխահոգութեամբ հայթայթած էիք թատերական ներկայացումներու արդիւնքէն:

Այս տեսակ նպատակի գումարներ ևս ստացած ենք Գահիրէի մէջ նոյն նպատակաւ տրուած ներկայացման արդիւնքէն, զոր արդէն սկսած ենք թէև բաշխել - բայց գծախտարար այդ գումարները խիստ անբաւական են հանդէպ այս տարւոյ կարօտութեանց, որ ամէն տարիներէ շատ աւելի մեծ է և տակաւ աւելի պիտի մեծնայ, քանի որ գիւղացիներու ունեցած միջիջ հացն ալ օրրատօրէ կրպառի և կարօտելոց թիւն որ աւոր կը ստուարանայ:

Սովը ու ցուրտը, անօթութիւն ու մերկութիւնն միացած անհանգուրժելի դարցուցած են մեր ազգայնոց վիճակը հայրենեաց մէջ և եթէ փութով ոգնութիւններ չը հասնին, անհնարին պիտի ըլլայ մեզ արգիլել աւելի ծանր ու դժբախտ պատահականութիւնները ու սովամահները Ռուսի ինչպէս ուրիշ տեղերու, նոյնպէս ալ ձեզմով պուրաբնակ բարեւոյս պղծայիններու կարեկցութեան ու գթութեան գիտում կընենք, խնդրելով որ փութաք նորէն ուրիշ կարգադրութիւններ ձեռք առնել և նպատակ նոր ու կարեւոր գումարներ փութացնել, որով թերեւս հնարաւոր

լինի սփոփել անօթութեան ու մերկութեան տառապող թշուառները, որքեր, այրիներ, չքաւորներ ու մերկերը:

Այս համառօտ տողերու մէջ չեմ կարող գծախտարար նկարագրել թշուառութեան ու ազքատութեան ուստիութիւնը, զոր արդէն անհնար է որ գրիչը կարենայ լիովին նկարագրել, և կը յուսանք որ օտարաբնակ մերազնայք ու հայրենակիցք ի լուր և ի տես նոյն թշուառութեանց կը փութան լիովին կատարել իրենց պարտականութիւնը հանդէպ իրենց համազգի եղբայրք:

Մնամք ազօթարար Առաջն. փոխանորդ Վանայ Մեսրոպ քէյ, ձանկիւսան Դիւան սովելոց նպատարաշխ Յանձնախումբ

Յանձնախումբս թատերական ներկայացմանց հասոյթէն գոյացած գումարն փութացած էր զրկել Վանայ սովելոց, որուն ի պատասխանը ստացած է յեջեալ սրտածմբիկ պաշտօնական նամակը, հարկ չը կայ ըսելու, և բարի է մեզ յուսալ որ ուրիշ քաղաքներու պարտաճանաչ ազգայինք պիտի հետեւին Վառնայի օրինակին և պիտի փութան իրենց նպատակները հասցնելով հայութեան սիրտն ու հոգին կազմի Վանայ հայութեան թըշուառութիւնը և սովը գէթ մեղմացնելու:

Մնամք յարգանք Վարդադիր յանձնախումբ Յ. Կ. ձանկիւսան Արշ. Սարոյխանեան 10 յունվար 1907 Վառնա

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՌԱՇԵՏԻՑ

Յեզ փոխութիւնը մեծ ծաւալ է ստացել Պարսկաստանի բոլոր անկիւններում: Թէհրան արդէն կազմուել է «Անջումա» արդարութեան տունը, զորը զեռ չէ ստացել որոշ

ընթացքը, որի պատճառով մի քանի քաղաքների պատգամաւորները ու շանաւուն պիտի վերադարձնեն :

Ռաշտը եւս անտարբեր չէ այդ ընդհանուր գործին . այս տեղ էլ ընտրել են ժողովրդի կողմից պատգամաւորներ, որոնք պատրաստուած են ուղղելու մայրաքաղաք : Պարսկահայատակ հայերը որոնց տրւած էր իրաւունք ընտրելու մի անձնաւորութիւն, որոնցին ձաւնի առաւելութեամբ տեղիս վաճառական պ. Ս. տէր Սարգսիանքին, մի մարդու, որը դէմ է սահմանադրական օրէնքին . մի անձնաւորութեան որը իւր կեանքի նպատակը դրամի մէջ է փնտրում . այդ բոլորը դեռ մի կողմ խօսելու ընդունակութիւնը չունենալով, իւր միտքը թարգմանի միջոցով է հաղորդում : Ահա այդպիսի մի անձնաւորութեան է պատգամաւոր ընտրուած հայ հասարակութիւնը :

Բայց մի թէ չկար մեր մէջ աւելի ընդունակը, Խոնու չէ, կային, բայց դժբա պակասութիւններ ունէին . դոցա չէր կարելի ընտրել, որովհետեւ հնչակեաններ էին, եւ այդ պատիւ չէր բերել տեղիս դուռնակեաններին, ինչն իւրով աւելի շատ քան հնչակեանները . բայց չունենալ մի ընդունակ անձնաւորութիւն . ահա այդ նկատի ունենալով որոնցին ընտրել մի չեզոք անգիտակցի, քան մի հնչակեան գիտակցի, տեսէք որ աստիճան արմատ է ձգել մեր մէջ կուսակցամտութիւնը, որ մենք մեր եսը պահպանելու համար ունենալ անել հասարակական շահերը չենք զլանում . ինչեւիցէ կը ցանկանանք որ մենք սխալած լինենք եւ այդ չը վնասէ տեղային հայ հասարակութեան շահերին . անցնինք բուն խնդրին :

Կառավարութիւնը ներկայ պարագայում համարեա կողքի է իւր դարերից ի վեր գործադրած ուժը . պարսիկ ժողովուրդը, որ մի ժամամասնակ տանում էր ամեն տեսակ բռնութիւններ, գիժանում էր շարշարանքի, ծեծի, սովորական երեւոյթներ կարծելով այն բոլորը, այժմ դիմադրութիւն է ցոյց աւելի : Բըռնացող անհատին բռնանում է, ծեծին, ծեծով է պատասխանում, ցոյց տալով օրէնքը, որ գոյութիւն չունէր առաջ Այն օստիկանները, որոնք մի ժամանակ դահիճներ զտած պարպում էին ժողովրդի քակը, ծծում նորա արիւնը կենդանի մեռեալ դարձնելով հեռանում էին եւ գինետուն մտնելով վատնում խեղճ ժողովրդի դառն քրտինքով ձեռք բերած դրամները, այժմ չունենալով այն ուժը թողնում են իրանց պաշտօնը կողմնակի գործերով են պարպում :

Այդ բոլոր փոփոխութիւնները որոնք տեղի են ունենում թւում է մարդուս երազ : Պատճառը այն է որ չափից աւելի լանդուզն քայլ արեց Պարսկաստանը ու յսկսեց, քայց չափը մեծ վերցրեց եւ այդ անսահման քայլն է, որ ստիպում է շատերին իրականութիւնը երեւակայութիւն կարծել երբեմն երեւան է գալիս պարսիկների մէջ այնպիսի օգեւորութիւն, այնպիսի շարժում, որ մարդ մի րոպէ կարծում է յաղթանակը արդէն տարած, ազատութիւնը գրկած եւ ամբողջ Պարսկաստանը իւր փափագին հասած : Ազատ պրօպականդա տեղի է ունենում բոլոր մզկիթներում . իսկ վերջերս լոյս ընկաւ շուկայում, մի կօֆէ-վաճառ

որը բարձրանալով մի խանութի կտուրը դիմաց հասարակութեան լի ոգեւորութեամբ . սեղաւորներ ձեռք առնելով ազգայնական եւ մաղթում եմ շահնշահին երկար կեանք, իւր շնորհած ազատութեան համար, ազատութիւն, որը կապ ունէր մի իօնաւոր մարդկանց կեանքի եւ մասնաւոր հետ : Ողորմած շահը մտնելով իւր հպատակի դրութեան մէջ խնայեց արդէն մեր վաղուց մեռած կեանքը, թող չը տեսց մեր երակներին հոսելու տարիներեց ի վեր հոսած արեան վերջին կաթիլները պարգեւեց այն, որին կարիք ունէր ամբողջ Իրանը, Ինչ էինք մենք հենց մի տարի սրանից առաջ . մարդ, թէ զազաններ, ոչ այդ ոչ այն . կապիկներ մեր կրօնակից պաշտօնեաների եւ մօլանների ձեռքում . ամէն տեսակ պարեցնում էին մօզ . մենք դարձել էինք ստրուկներ, թշուառներ խեղճեր եւ ողորմելիներ . իսկ Ինչ էր մեր հայրենիքը մեր այքում, անպէտք մի վայր, որտեղ չը կար մեզ համար ոչ հանգստութիւն, ոչ ապահովութիւն . մեզ չէր տւած Իրաւունք շահելու հայրենի հողի արդիւնքներից, արդիւնք, որից մի իօններ են կորչում մեզ շրջապատող օտար ազգի կառավարութիւնները, այն կառավարութիւնները, որոնք համար կուսակցիկ էր ամբողջ Իրանը, իւրաքանչօք մէկը ցանկանում էր ինքը տէր դառնալու . մէկը գործադրում էր իւր քաղաքականութիւնը, միւսը իւր դրամը, մէկն էլ իւր ուժը . եւ Իրանը որպէս մի տաշեղ աշխարհ ծովի վերայ տատանում էր : Մեր նախնիքը ինչեւիցէ աւելի խաւարամտներ կարծում էին բոլոր յանցանքը կառավարող պաշտօնեաներին եւ ցանկանում էին հայրենիքը ձգելու ուս կառավարութեան ձեռքը . փառք մարգարէին որ չը յաջողուց այն ցանկութիւնը թէ չէ մենք կը նմանէինք գետից ազատուած ծով ընկածներին . փառք աւաին որ իրականացաւ զուրաւի դրամը, որում յայտնում էր թէ կուզայ տիրաթղտան փէյղաժարը . կառավարող իւրամին դէպի արքայութիւնու եւ ահա այսօր նա մեր մէջ է . յառաջ եղբայրներ, բաւական է որքան հեծեցինք մեր կրօնակից պաշտօնեաների բռնութիւնների տակ, ձգէք ձեր պարանոցից այդ ստրակական շղթաները . մեզ հետ է աւաւր, թող կորչին մարդասպանութիւնները, թող կոչի ցարը, որը միակ յոյսն էր մեր նախնիքների, յոյս, որը գազան դարձած յօտանց մեզիւ մեր եղբայրների մարմինը, հազարաւորների արիւնը թափելով . եղէք համերային բոլոր Պարսկաստանում ապրող ազգերի հետ որպէս եղբայրներ, ձգտինք հասնելու այն նպատակին, որ դէմ առ դէմ կանգնած է եւ որին մօտենալու մի քանի քայլ է պէտք մեր կողմից : Թող նախանձէ այն մեծ Թուսաստանը, որ հազարաւոր զոհեր տեսց շահնշահի նորան, որին ասանց արիւնհեղութեան համարեա հասել ենք մենք : Մի զլանաք գուժարեւու, պատգամաւորներ ընտրելու, աշխատեցէք որքան կարծէք գիտակից մարդկանց ձայն տալու . թող կորչի ձեր միջից երկիրը . հաւատացած եղէք եւ չեմ խօսում ձեզ հետ մենակ, այլ երկու մի իօն մարդկանց կողմից է : Բոլոր ասածներս թող տեսնեն մեզ շրջապատող կառավարութիւնները, որ չէ տարել Իրան

նի զաւակների սրտում հայրենիքի էրը՝ Ճառախօսը վերջացնելով հեռացաւ մեծ ապաւորութիւն թողնելով երկու հազարից վեր պարսիկներ Վրս : Այս բոլորը առ այժմ կապարու է Պարսկաստանում . ինչ հետեւանք կունենայ նորին մեծութիւն Մամատ Միրզա գահաժառանգի գահը բարձրաւալուց յետոյ, ապագան ցոյց կը տայ :

Արաքս
19 դեկտ. Պարսկաստան

ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՆԵՐՈՒՆԵՐՈՒՆ

Այս նամակը զոր ուրախութեամբ և հպարտութեամբ կարգացի, կաւետէ հայրենիքին պատուէք երեսուն տարուան այն ահաւելի գիշերէն, որ իր խաւարի պատանքով ծածկեր էր գիտակցութիւններն ու մտածողութիւնները և թէ այդ անշարժ խաւարի մէջէն պիտի ծագի գործունէութեան նոր արշաւոյս մը, օսմանեան արշաւոյսը . . . Ո՞վ կը յուսար, որ մինչդեռ մէկ կողմէն կեդրոնը հողին կաւանգէր, անդին նահանգ մը նոր հողի կառնէր :

Ո՞վ կը սպասէր, որ այն ժամանակ, երբ միւսիւրմանները ոչ թէ լիտուած, այլ բռնակալութիւնը կը պաշտէին, անդին էր դրում մը բռնակալութեան դէմ պիտի ծառանար . . . Սի՛մ էր դրում . ցիւներն առաջին թափին չը կը ցան արմատախիլ ընել այն նեխած կանկրէնը, զոր յառաջ էր բերած հնձող, ջարգող ու խորովող վարչական կեդրոնացումը Պօլսի մէջ, գէթ իրենց քաղաքէն արտաքսելով այն ցած ու կեղտոտ պաշտօնեաները, որոնք ստոր գործիք ըլլալ կուզեն Երևանը ձեռքին մէջ, ամբողջ օսմանցիութեան լքուած սրտին կեանք կը ներշնչեն .

Անտարակոյս բռնակալութիւնը ոչ միայն կառավարութեան արարքներով, այլ և ազգսրնակչութեան այդ արարքներուն մասնակցելով է, որ կը հիմնաւորուի, և ազգին դրամով նոյն այդ ազգն է, որ արիւնով կը ներկուի : Եթէ տուրք ու չորք տուողները գիտնային, թէ ինչո՞ւ համար կուտան և ինչո՞ւ համար պէտք է տան, եթէ անոնք յայտնէին, թէ ինչո՞ւ համար կուզեն տալ, այն ատեն ոչ կեղեքով բռնակալ կը մնար և ոչ ալ կեղեքուող : Ինչպէս չէ միթէ, որ կուսակալութիւնը յարատեւէ իր բռնակալութեան մէջ, քանի ազգն ինք իր ձեռքով կը լծցնէ գրամը կառավարութեան քակին մէջ, այն կառավարութեան, որ կապ չի ազգին արիւնը ծծելով հաճեցով, և քանի ազգն է, որ ինք իր ձեռքով կը յանձնէ զօրքը, որ բռնակալութեան գործ

ծիքն է : Նոյնչափ խոշոր պարպատութիւն չէ՞ արդեօք հարցնել այլեւս թէ ինչո՞ւ փառիշահը մեզ կը կեղեքէ անշարժ : Եթէ գեռ շարունակենք այնքան կարծատես լինել, որ մեր ազգաներուն պատճառը փնտռենք միայն մէկ անհատի վատութիւններուն մէջ, այն ատեն թող վստահ լինինք, որ երբէք չը պիտի ապատինք ազգաներէ : Գասն տարիէ ի վեր շարունակուող մեր հրատարակութիւնները, փոխանակ բոլոր շարիքներն ու բարիքները կեդրոնէն սպասելու և հիւանդ բռնակալութիւնները փոքրագուծութիւնները թուելով պղտիկնալու, եթէ աշխատէին քննել այն հաստատական պատճառները, որոնք մեծ զարկ կուտան այդ փոքրագուծութեան, յառաջացած բռնութեան, եթէ ջանային քննութիւններուն արգիւնքը պարզ և յստակ լեզուով նահանգներուն մէջ ընդհանրացնել, այն ատեն բռնակալութեան կեանքին առաջ կտրուկ սահման մը գծած կը լինէին և միութեան պի՛ծ մը հաստատած՝ մեր հայրենիքը ամբողջացնող այն տարրերուն միջև, որոնք իրարու բոլորովին օտար են մնացած, շնայելով, որ անոնք ունին բոլորովին միեւնոյն, փոխադարձ շահերը : Այս բնուեա չեմ մտաւար այն՝ ո՞ւր կը դնան ձեռքները միջոց սխալ, թերի կը լինին և որ յառաջագի՛տութիւն ու կատարելութիւնը կը կուզեն վերջին մրցանակը՝ հաստատակամ ջանասիրութեան : Իսկ մեր գործերէն ու վիճակէն միշտ գոհ լինելը ամէն բան կը նշանակէ բացի յառաջգի՛տութեանէն :

Արեւելքի, և ամենէն աւելի մեր մէջ, կայ շափազանց վատ սովորութիւն մը . երբ մեզմէ մէկը կամ մի քանիները հանրութեան շահին ծառայելու համար ամեն զոհողութիւն ցոյց կուտան նոյն իսկ իրենց կ'անյր կը վերտանգեն, մենք կը բաւականանանք հեռուէն հանդիսատես ըլլալով անոնց Եւ երբ տեսնենք որ ձեռնարկողներն ազգտի կը հանդիպին, այն ատեն մեր անտարբերութեան ստորութիւնը կը փոխուի մայմնացած հեզանքի և մենք ինքնապաշտ, գարշիլի վարմունքով մը կըսենք . « անհեռատեսութեան պատիժ » : Մենք չենք մտածեր, որ անոնց ազգտն ուրիշ պատճառ չունի, բայց եթէ մեր անփութութիւնը, մեր անդադարութիւնը, մեր անխղճութիւնը՝ Հասկցող մարդկութեան համար չկայ աւելի ողբերգական տեսարան, քան այն, երբ այն դէմքը, որ պէտք է լար, չը խնդրոյ ցաւի ու վշտի պրկումով . . .

կաստեմոնիէն յետոյ, էլ զրու մի ապստամբութիւնը վստահարմ րութիւնով իր կողմէ, դէտ մէկ մասը ազգի դէմքին, որ կոհակ կոհակ փրփրացող բռնակալութեան առաջ: Վշտի ու կռկրիժի գալարումներուն խնդուքէն գունատուած էր: Բայց սյու վստահութիւնը, որպէսզի օտարացիութեան դէմքի ոչ թէ միտակ մէկ մասին, այլ ամբողջին վրայ փալի, այն երկար ժամանակ պէտք է խորապէս տղզէ մեր ազգային բնաւորութեան վրայ: Բոլոր օսմանցիները պէտք է հաւաքուին իրենց ազգային իրաւունքներուն շուրջը, պէտք է աշխատին կաստեմոնիի և էրզրումի շարժումները փոխադրել բոլոր նահանգները: Պատուաւոր մարդիկ ամէն տեղ կան: գաւառներու, գաւառակներու և նահանգներու մեր ազնիւ զգայութիւններով տողոր գորուած հայրենակիցները պէտք է իրենց մէջ մանր մանր համայնքներ կազմակերպեն և կապ ունենան իրարու հետ յարաւոր հարգակցութեամբ: Մենք չենք կրնար երեւակայել բարի նպատակներու տէր օսմանցի մը, որ որ և է կերպով շը կարողնայ օգնել այս շարժումին: Տղէտը, գիտունը, ազգատն ու հարուստը ամէնքն ալ իրենց կարողութեան շափով կարող են ծառայել և պէտք է ծառայեն: Բնական է որ անոնք, որոնց բարոյական և նիւթական կարողութիւնն աւելի է, պարտաւոր են ոչնէլ հասարակութեան այդ համաստեմութեամբ: Հակառակ պարագային ապերախութիւն գործած կը լինին հայրենիքին, մարդկութեան և բնութեան հանդէպ: Ահ, ըմբռնէինք մէկ անգամ վշտանալ մեր վշտերէն զատ ուրիշի վիշտերով, երջանկանալ մեր երջանկութիւնէն զատ ուրիշի երջանկութիւններով, և ապրիլ այն ընդարձակ հորիզոններուն մէջ, որոնք կը պարզուին մեր անձնական գոյութեան շընչին օսմաններէն դուրս:..

Հետեւինք էրզրումի առաքինի օրինակին: Փատիշահը գեւա եւս հրեանք է և հրեանդութիւնն ալ փտանգաւոր: Չըսենք, թէ մեր ընելիքը համբերութիւնն է, Մեր կեանքը մէկ մահէ սպասելը աւելի վատ նախատիւնք է. քան ինքը մահը:

Ասպակէզդին
10 հ. կա. 1906
Ներկրի Չայնո

ԻՐԿՆԵԼԸ ՀԵՐՔԵԼ ՉԷ

Իմ առջեւ է Վեպոլիի 20 զեկ թիւ 19ի խմբագրականը: Ակամայազը կարգամ եւ կը զարմանամ թէ՛ այդ յօդուածին ներքեւ Թուրքի Չարգարեանի ստորագրութիւնը կը գտնուի:

կը զարմանամ. որովհետեւ Իրոկիէն սի լապտերով անգամ չէ կարի ի գրու: նել հոն ամենափոքրիկ պատասխան մը բոլոր այն հարցերուն նկատմամբ որոնք իմ ատենախօսութեան շուրջը զարման: կը տխրիմ ալ միեւնոյն ատեն տեսնելով թէ զրագէտ մը ինչ պէս բերանը կաւրէ եւ ութսունը բոլորող պատու կնկան մը երեւոյթը կտանէ, երբոր կը ձգնի մեծ մեծ ջարդող, բերանը աւրող, ասպետական մեծամտութիւն ունեցող մէկը գաշնակցական: Մօլթայի նէ բասու ժամագի զիսկալիւնայական կարգին հրաւիրելու:

Սկսինք վերնագրէն որ շատ յաջող է: Ակամայէն գրուած բացատրութիւններն եւ հերքումներն, ալ կամայ որովհետեւ ամբողջ յօդուածը կրկնութիւն մըն է եւ բնդայնում մը նամակատու փի աղղէն շատ որոշ միտքերուն եւ ուրիշ ոչինչ:

Ակամայ է մանաւանդ անոր համար եւս որ ընկերվարական մըն ալ ունեցաւ անհամեստութիւնը գաշնակցականներուն հանգիստը վրդովելու Պուլկարիոյ մէջ:

Ակամայ է վերջապէս անոր համար որ, Միութեան հարցը ընդհանրապէս եւ իմ հայեացքներս այդ մասին մասնաւորապէս փորձաքար մը եղան, ուր գաշնակցական քիւրդի թաթ—յեզգափոխական շէֆերը պէտք էր իրենց գլուխը զարնէին:

Բերաննիս աւրած չենք եւ ոչ այ պատճառ ունինք աւրելու: Միայն երեւոյթները բացատրած ենք եւ եթէ երբէք մեր բացատրութիւնները տղից են սղեղ են անոր համար, որովհետեւ արտասահմանեան յիշատակական կեանքին երեւոյթները շատ տղեղ են արղին: Մենք վարժուած չենք եւ պատճառ մը չունինք տղեղ երեւոյթները գրագիտական գեղեցիկ խօսքերու տակ սքօղիտու:

Ազգայնութեան անբաժան ո եւ է եւսանդ ու ոգևորութիւն շիջանդորոյ մը առթիւ կարծիք յայտնելուն մէջ, որովհետեւ մենք ազգասիրութիւն չենք զաւանիր արտասահմանի ազատ միջնորդին մէջ յեզգափոխութեան վրայ խօսելու: Մենք ազգասէրներու մասին, յեզգափոխական շըլ լալով հանդերձ, աւելի խտտապահանջ ենք:

Ըսինք եւ կը կրկնենք թէ իրեւանդամ հասարակութեան մը հրաւիրուած էինք մեր կարծիքը յայտնելու եւ յայտնեցինք: Հոն ոչ ազգասիրութիւն կայ եւ ոչ իսկ ազգայնականութիւն: Ամէն ընկերվարական իր ապրած հասարակութեան մէջ տղիք ունեցող երեւոյթներուն հանդէպ կը խօսի: Ընկերվարականներու մէջ այս մասին կարծիքի ո եւ է տարբերութիւն չկայ:

Պ. Չարգարեան նորէն ձեռնհասութեան շուրջը կը գտնայ եւ ի վիճակի չըլլալով իմ այդ մասին տրուած բացատրութիւններու նկատմամբ նոր բան թ խելու, կը կրկնէ: այս անգամ գրագիտական! աւելորդ մեկնաբանութիւններով եւ զարձուածքներով:

«Ըսինք եւ կը կրկնենք» ձեռնհասութեան խնդիր չի կրնայ ըլլայ հոն. որ հարցը հասարակական է. Հասարակութիւնը ինչ աղակաւորիք տարբերէ ալ բաղկացած ըլլայ, անոր ամբողջին ձեռնհասութեան կը պատկանի ամէն մէկ հարց: Հասարակութիւնը երբ հաւաքաբար ձեռնհաս է հարցի մը նկատմամբ, անոր իւրաքանչիւր անհատն այ ինչ կարծիքի եւ քաղաքական համոզումի տէր այ ըլլայ, մասնաւորապէս ձեռնհասութիւնն ունի մասին: Միմիայն վորչական հարցերու մէջ է որ ձեռնհասութեան խնդիր կը ըլլայ: Ինչ որ անհիւստեանք թուի, շատ անգամ իրարու տեղ գործածելով:

Չարգարեան չի կրնար հասկընալ ձեռնհասութեան էութիւնը եւ զայն կը շփոթէ հեղինակութեան հետ, շատ անգամ իրարու տեղ գործածելով:

Ձեռնհասութիւնն ունիմ խօսելու, բայց թէ ինչ աստիճանի հեղինակութիւն մը կրնամ ըլլալ խնդրոյ մը առթիւ խօսած ատենս, այդ չի գիտեմ: Ո եւ է մէկը իրաւունք չունի ինք իր հեղինակութեան աստիճանը չափելու: Լսող հասարակութիւնն է որ իր գիտակցութեամբ անքստիծէ կրնէ յայտնուած միտքերուն ճշմարտութիւնն եւ ստուգութիւնը, ու կորոշէ հեղինակութիւններուն աստիճանը:

Գուզէ՞ք հեղինակութիւն չունենալ ստուգել, հերքեցէ՞ք յայտնած մտքերու ստուգութիւնն եւ արդարացիութիւնը, փոխանակ մտքի գրական օնանիւմ ընելու:

Հեղինակութեան եւ ձեռնհասութեան մասին ձեր ունեցած արտակարգ ըմբռնումը ցուցաբերու չպատակով մէջ բերած բացատրութիւններու միայն մէկ հարցին կանդաղառանակք, ասանց նկատելու թէ՛ ինչպէս զուր գտնէք հերքեցէ՞ք:

Ոտքը օտարներու ձեռնհասութեան համար է:

Ես ալ ձեզի հետ կրնամ ընդունիլ որ Գիտաւոր ի վիճակի է հեղինակութիւն խօսելու հայ յեղ կեանքի հարցերու մասին. խնդիրը հոն չէ: Դուք կըսէիք եւ ըսիք թէ՛ ձեռնհասութիւնն ու հեղինակութիւնն խօսելու համար անհրաժեշտ է հայ կազմակերպութեան մը պատկանիլ: Մենք ձեր այս քրթիքի միջին զէմ բերինք հեղինակութիւններու վրայ դատելու իսկական քրթիքի մը: Եւ արդարեւ, եթէ Գիտաւոր հեղինակութիւն մըն է յեզգափոխական տղեղ կողմերու վրայ խօսելու աստիճան, անոր համար է որ իր գրածները, ըսածները ճշմարտութիւններ են, ստոյգ եւ կատարելապէս արդարացի:

Կը տեսնէ՞ք, պ. Չարգարեան, ինչ ըսել է հեղինակութիւնը եւ ինչպէս մարդիկ հեղինակութիւններ կը ըլլան:

Ինչ հարկ կար ուրեմն ելլել եւ ձեռնհասութեան վրայ ճառել կրկին անգամ ձեր տղիտութիւնը մասնաւոր ըրիտքով մը այնքան տարրական, աշակերտական հարցի մը առթիւ: Ինչ հարկ կար, զի երկար ճառին, աւելորդ մեկնաբանութիւններուն, չպակարգի եւ այլ աղակալիկ խօսելակերպերու, երբ անդին ամենամեծ գիւրութիւնը ունէիք, քանի մը տողերով ձեր կարծիքը յայտնելու իմ ըսածներու նկատմամբ:

«Մեծամտութիւնն մը ըրած չենք ըլլար անշուշտ ըսելով թէ՛ զուր նախընտրեցիք տարրական խնդիրներու մասին, ձեր տղիտութիւնը մատնել: քան թէ խօսիլ յեղ կազմակերպութիւններուն միտքեան նը-

կատմամբ, ուր անխուսափելիորէն պիտի իյնայիք տարբեր իմաստակութիւններու մէջ. բան մը որ շատ գէշ յանձնարարական մը պիտի ըլլար ձեզի. յեղափոխութիւնը արհեստագործողներուդ. եւ կամ աւաղ ձեր կայծիքը միտքեան մասին մեկին եւ անկեղծօրէն յայտնած ատեն քստիքիքը անխուսափելի պիտի ըլլար պիտոյական եւ այլ շէֆերու հետ, որոնցմէ միայն կարեւոր ունի ձեր դիրքը, ձեր յեզգափոխական ձեռնհասութիւնն եւ հեղինակութիւնը:

Իմ օրհանը որ միտքեան համար ձեռք առնելիք միջոցները պէտք է ըլլան նպատակայայտ մը եւ խելացի: Ձեր այդ ըսածին ըսելիք չունինք. բայց թէ ո՞րն է խելացի եւ նպատակայայտ միջոց, այդ է որ կուզենք իմանալ եւ հասկնալ ձեզմէ, պ. Չարգարեան: Ո՞վ կը պնդէ հակառակ եւ ո՞վ կըսէ թէ՛ միջոցները պէտք է ըլլան անպատակայայտ մը եւ ոչ խելացի:

Միութիւնը իրագործելու համար իմ ցոյց տուած միջոցներս, դուք, ինչպէս յայտնի կերեւայ, չէք ընդունիր նպատակայայտ մը եւ խելացի: Ինչպէս... ըսէ՞ք, որպէսզի մենք ալ ուղղուինք մեր սխալ ըմբռնումներուն մէջ, ըսէ՞ք, ինչու եւ ինչպէս մենք մեր «անպատասխանատու, անզգայ» լեզուովը հեռու եղանք ընծայելէ օգտակարութիւն մը բաղձացուած նպատակին նկատմամբ:

Դուք պարոն Չարգարեան եւ ձեզի հետ բոլոր անոնք որոնք կապին իւր պէս ազատ երկրի մը մէջ ձեզմէ այդքան շատ երգուած «Ունա սորի» ցաւերէն հեռու ինչո՞վ աւելի «պատասխանատու» են:

Իրտենք ձեր «պատասխանատուութիւնը» և ձեր լեզուին զգուշութեան—մօթիւնը: Գիտենք որ ամենաուժեղ կուսակցութիւնը չի խնայեր բոլոր անոնց, որոնք կուենենան անընդհատ յեզգուցութիւնը մտքի եւ կամքի ազատ շարժում մը ընելու: Կը զգանք մեր պատասխանատուութեան ծանրութիւնը եւ սրտերնիտ դատն կակիծով մը կը գալարուի, երբ կը խոստովանինք թէ ձեր գրածները պէտք է անցին ցէնզէն և հակակշիռէն այն մարդերու, որոնք երկիրնքի անողք մէկ հեղինակութիւն միայն դրուած են ձեր քովը, հակելու համար ձեր ամէն մէկ շարժումին: Ներքեցէ՞ք որ նորէն բերաննիս աւրեցինք:

Միութեան եւ համբարաշխութեան մասին ձեր կարծիքը յայտնելուն մէջ զուր կը տեսնէք մարմալ մը խօսելու, մեր շուրջը փոթորիկ հանելու ձգտում մը եւ կըսէք՝ «սիրող ճառախօսներու թուականը անցած է»: Արգեօք սիրող ճառախօսներու թուականը անցած է տեղ տալու համար ամաթէօր յեզգափոխականներու: Չգուշացէ՞ք երկու կողմը սուր գործիքներ գործածելէ:

Մենք ճառախօսութիւն ընելու մարմալէն չէինք բոնուած. մենք ալ մեր կարգին պարտականութիւն մը կատարեցինք, ելլելով հրապարակաւ յայտնելու մեր համեստ կարծիքը, ասանց ինչպէս ակնկալելու նիւթական որոշ վարձատրութիւն մը այդ բանին համար:

Միութեան հարցը զուր շատ թնկաւոր փափուկ պայմաններու ցանցով մը հրատուած կը տեսնէք եւ չըլանայեացութիւն կը քարոզէք: Չէ՛, միութեան հարցը բնաւ թն-

ճկում չէ, եւ եթէ զուք անցեալին տխուր զէպքերով կուզէք փաստել ձեր այդ միտքը, պատճառը այն է որ զուք ձեր ամբողջ յեղափոխական ձեռնհասութիւնով եւ հեղինակութիւնով ի վիճակի չէք ըմբռնելու այդ տխուր զէպքերու ծնուցիչ էն էական պատճառը: Անցեալին մէջ վիճեց Միութիւնը, որովհետեւ արհեստական էր եւ բաժանման պատճառները չէին բարձուած: Աւ, ընդհակառակը, անցեալը իբրեւ տխուր փորձառութիւն մը աւելի կը դիւրացնէ եւ կը պարզէ թնճկուած հարցը, եւ ցոյց կուտայ թէ՛ անկեղծ եւ ճշմարիտ միութիւն մը կարելի է միայն եւ բացարձակապէս միայն այն պարագային, երբ յեղ. գործունէութիւնը կեդրոնանայ յեղափոխութեան բնական միջավայրին մէջ—երկրի մէջ:

Իսկ անուճեցի եւ իսկական Գործածան հանգոյց մը, երբ ատիկա ըլլայ երկրէն դուրս:

Ի՞նչ ունիք ըսելիք ստոր: Եւ եթէ զուք թնճկուած կը տեսնէք միութեան հարցը պատճառներէն մէկն ալ ու է՛ն զօրաւորը այն է որ, իսկական եւ անկեղծ միութեան մը ցէնը եւ յեղափոխական պահանջները անտանելի պիտի ըլլան բոլոր ամաթէօր յեղափոխականներու համար եւ իսկապէս թնճկուած վիճակի մէջ պիտի դնէ վերջիններու յեղափոխական զիջում, ձեռնհասութիւնը եւ հեղինակութիւնը:

Գրչի ի՞նչ թեթեւ դարձուածքով մը կեղծեք զգուշութիւն փաստաբանիւ Սօֆիայի ձեր ընկերներուն Ձաքարէական լուսթիւնը... Ձեր շրջահայեացութիւնը եւ զգուշութիւնը ծանօթ է ամէն անոնց, որոնք ձեզի կը ճանչնան: Ո՛րչափ դժբաղդ են Սօֆիայի դաշնակցականները, որ իրենց մէջ չունին քանի որ ազգասէր, ազգային պատիւին նախանձանդիր եւ տաքարիւն երիտասարդներ պօքս կոչուած արկիւմաններով փաստելու ամենաուժեղ կուսակցութեան օկղբունքային եւ թաքթիքային զօրութիւնը...

Գաղով հոգեբանական րուպկական փոփոխութեան, պարտաւոր եմ պ. Զարգարեան ձեզի յիշեցնելու որ պ. Մ. Յ. երբ կուզայ ինձի կանչելու ընթերցարան երթալու համար, բացատրութիւն ուզելու իօսքը երբէք չէ ըրած: Ան կը յայտարարէր թէ ընթերցարանը հաւաքուած են մէկ քանի երիտասարդներ որոնք կուզեն ինձի հետ տեսակցութիւն մը ունենալ եւ ուրիշ ոչինչ: Աւ անոր համար էր որ ես իրենց հարցուցի թէ առանձին պէտք է գամ թէ իմ հետս եղող երկու հնչակեաններու հետ, պ. Ս. կարապետեանը եւ պ. Յ. Սըրիսյանեանը: Այնպէս որ ես ընթերցարան կերթայի առանց զիտնալու թէ ինչ բանի համար կանչուած եմ, եւ պո՛հ մը ենթադրեմք թէ՛ ես կերթայի գիտնալով իսկ որ որ բացատրութիւն պէտք է տամ ինչ ինչ խնդիրներու մասին: Միթէ՞ իմ ըրած յայտարարութիւնս, թէ ես հրապարակաւ բացատրութիւն կուտամ, արդէն ինքնին բացատրութիւն մը կամ գոհացում մը չէ ձեր ընկերներուն համար, ինչ որ պիտի ըսէի առանձին պ. Մ. Յ. ին ըսի որոնք, որոնք հոն հաւաքուած էին: Ահա բոլորը: Եթէ ես գիտնայի թէ զուք եղելութիւններն ալ պիտի խեղաթիւրէք, հաւատացէ՛ք չէի յարգեր ձեր ընկերները, երթալով

ընթերցարան. բայց յառաջիկային կըզգուշանամ ամենափոքրիկ յարգանքն ալ տալէ:

Մասնաւորապէս շնորհակալ պիտի թողուք ինձ, պ. Զարգարեան, եթէ իբրեւ հրապարակաբար հ ճիշտ աւելի որոշ կերպով յիշեցնել. որ հրատապ հարցի մասին է որ պէտք է կատարեմ իմ պարտականութիւնս: Ակնարկութիւններէ շատ չեմ հասկընար, եւ քանի որ նոր տարիին մօտ գրուած յօդուածները հայ գրադիտական մօտայի մը համաձայն մաղթանքով մը կը վերջանան, թող առէք մեզ որ առիթէն օգտուինք եւ մեր մէկ վաղեմի մաղթանքը յայտնենք ձեզի:

Մենք սրտագին կը մաղթենք որ պ. Զարգարեանի յեղափոխական գործունէութեան արձագանքը գայ «արիւն արցիւնքի» երկրէն եւ այն ատեն մենք իրեն պիտի խոստովանինք յեղափոխ. հեղինակութեան աւելի մեծ աստիճան մը: Իսկ եթէ այս բոլորը նկարագրի, խառնուածքի եւ մասնաւոր պայմաններու խնդիր է, այն ատեն պիտի մաղթենք որ պ. Զարգարեան եթէ ոչ տարբեր, գոնէ գրագիտական գեղեցիկ խէ՛ղչներէ դրողուած, փնտէր իր բախտը տարբեր ասպարէզի մը մէջ ուր պիտի ունենայ ազատ կարծիք եւ ազատ կամք մը ու ապահով ենք որ այն ատեն ալ ալ պիտի սկսի «հայտնայ» միզի հետ եւ շատ աւելի, որչափ որ այդ բանը իր արդի ընկերները չի վայելեցնեն իր բերնին:

Ս. Զինուորեան
29 դեկտ. 1906
Ֆիլիպէ

ԵՆՈՐՀԱԿԱԿԻՒՄ

Նուագախումբիս վարչութիւնը բոլոր ընկերներուն կողմէն կուզայ հրապարակաւ յայտնելու իր շնորհակալութիւնները Վառնայի հայ հասարակութեան եւ օտարներուն, որոնք իրենց ներկայութեամբը պատուեցին 25 դեկ. գիշերը սարգուած նուագահան զէսը:

Շնորհակալութիւններ նաեւ օժանդակ մասնախումբին, որոնք իրենց հոգատար եւ անձնուէր ծառայութիւնները չը զլացան, որով մեծ զարկ մը տուին եւ քաջալերութիւն ներշնչեցին մեր բոլոր անդամներուն, ցոյց տալով որ չէն պակսիր եղեր հայերուս մէջ գեղարուեստի սիրողները գնահատողներ:

Ի գիմաց Ռուսոնուքի հայկ. «Արաքս» նուագախումբի վարչ. Ատենադպիր Ատենապետ Պարոյր Տէրտէրեան Նիկ. Տողբաճեան
30 դեկտ. 1906
Ռոսոնուք

Ա Չ Դ

Քաղաքիս Ս. Եկեղեցւոյն համար կարող ժամկոչի մը պէտք կայ. պայման է ամուրի ըլլալ: Դոհացուցիչ ամսական, փափաքողը ընդհուպ ներկայանն ի

խորհրդարան, թաղ. խորհրդո կնիք Վառնա 9 յուլիս 1907

ՆԵՐՔԻ : ԼՈՒՐԵՐ

Աղագային թատրոնի բացման առթիւ անցեալ շաբթու ուսանողութիւնը ցոյց մը ըրաւ կառավարութեան եւ Իշխանի դէմ: Այդ օր ոստիկանութիւնը միջամտեց բայց ոչ այնքան զօրաւոր կերպով:

Կառավարութիւնը որոշեց համալսարանը գոցել. եւ ամսոյս 8-ին, իրօք համալսարանի մէջ դասախօսութիւն տեղի չունեցաւ, որովհետեւ զօրքը եւ ոստիկանութիւնը զայն գրաւած էր:

Այդ առթիւ սուսնողութիւնը ցոյց ըրաւ. Այս անգամ զօրքը եւ հեծեալ ոստիկանութիւնը կարգը վերահաստատեց, ցուցարարներուն եւ զօրքերուն կողմէն վերաւորեալներ կան: Կառավարութիւնը հանդիպած սուսնողները կը ձերբակալէր եւ կարտօքսէր ոչ սօֆիստիկները: Կսուի որ ուսանողներէն անոնք որոնք կըրթուցիւն շարունակելու համար զինուոր չէին առնուած այժմ պիտի առնուին:

Այս ուսանողական ցոյցերուն առթիւ կրթական նախարար պ. Երչմանօֆ հրաժարական տուած է եւ Իշխանին կողմէն ընդունուած է այդ հրաժարականը:

Նախարարական տաղանայի մասին ալ կը խօսուի: Սօֆիայէն դէպ ստոյգ անդեկութիւններ չը կան այդ մասին:

Նրկաթուղիի պաշտօնեաներուն գործադուլը դեռ կը շարունակուի: 21 օրուան ժամանակամիջոցը, որուն ընթացքի մէջ այդ պաշտօնեաները իբրեւ զինուորներ պիտի ծառայէին լրացաւ, բայց դեռ նոր կարգադրութիւն մը չէ եղած: Զինուոր պաշտօնեաները պատերազմական նախարարէն կը պահանջեն որ ազատ արձակուին:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Սուլթանը իզմիրի վալի յայտնի Քեամիլ փաշան պաշտօնանկ րենելով կը հրամայէր Ռօտօս կղզին երթալ: Քեամիլը փոխտնակ Ռօտօս երթալու կսպաստանի անգլիական հիւպատոսարանը եւ անկէ կառավարկէ թէ ինք կրնայ երթալ միտոյն կամ իր հայրենիքը Կիպրոս, եւ կամ Պօլիս:

—Պօլսէն կը հեռագրեն թէ Քեամիլ փաշան արդէն Պօլիս հասեր է: —Սուլթանը ընդարձակ բարեներգումներ ներմտծելու հա-

մար յանձնախումբ մը կազմեր է եւ այդ յանձնախումբին մէջ իրեն իբր օգնական նշանակեր է իր սիրելի որդին Պաւլ հանէտ արիւն:

—Պօլսոյ մէջ ձերբակալուած են բազմաթիւ մէծ թուլքերը վերջին կոշերը տարածելուն համար:

—Անցեալ ուրբաթ օր Սուլթանը ընդունեց Ֆրանսական դեսպան Քոնստանտնոս արձակուրդով պիտի մեկնի: Դեսպանին այդ ճամբորդութեանը քաղաքական մեծ նշանակութիւն կը արուի:

—Նախարարական խորհուրդը հակառակ յոյն պատրիարքի դիմադրութեան համաձայնած է որ պուլկար սինօթ մը հիմնուի էքզարխի մօտ: Այդ ծրագիրը շուտով պիտի առաջարկուի Սուլթանին հաստատութեան համար:

Ռ Ո Ւ Ս Ո Ւ Ա

Զինուորական զլխաւոր դատախազ Բալվոնիս սպանութիւնը սարսափելի յուզում յառաջ բերած է պաշտօնեան շրջանակներու մէջ: Այդ առթիւ կրսուի որ Սթօլիբիի (նախարարապետ) գրութիւնը խախտուած է:

—Իէքսանդրիոյ մէջ քանի մը ուսանողներ ձերբակալուած են, որոնք կը մեկադրուին ոռուսական շոգենաւ մը օդը հանելու փորձ ըրած ըլլալուն մէջ:

—Պաշտօնեաներու մասնակի սպանութիւնները կը շարունակուին:

Ֆ Ր Ա Ն Ս Ա

Բարիդի մէջ կիրակնօրեայ հանգստութիւն պահանջողներու կողմէն ցոյց տեղի ունեցեր է: Սուցարարները շուկայ մը թալներ են: Քսնի մը վիրաւորեալներ կան, ի թիւս որոց եւ մէկ ոստիկան:


ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Բացուած է բոժանորդագրութիւն Ա. Դիւմայի «ԲԱՄԴԻԼԻ ԱՌՈՒՄԸ»

Հոչակաւոր պատմական գործին Ֆրանսական մեծ յեղափոխութեան ժամանակից:

Թարգմանութիւն

Մ. Պաղտասարեանի Թարգմ. (Պարկառտան)



Печатница „Взаимность“ Варна